

ԱՆԱՍՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏԻ ԿԱԶՄԱԾ ԵՐՈՒԱԱՂԵՄԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ՊԱՎԵԼ ԶՈՒԱՆՅԱՆ

Երոսաղեմի Հայ գաղթօջախի պատմութեան վաղմիջնադարյան շրջանի ուսումնասիրութեան համար կարևոր հաղորդումներ են պահպանվել Անաստաս վարդապետի անունով մեզ հասած ուղեգրական բնույթի թղթում, որտեղ տրված է Երոսաղեմի Հայկական վանքերի ցուցակը ու թվարկված են նաև այն հանգամանքները, որոնք դրդել են ձեռնամուխ լինելու ճանապարհորդութեանն ու նշված ցուցակը կազմելուն:

Հայ Երոսաղեմի խոշոր գիտակ Մկրտիչ եպս. Աղավնունին հետևյալ կերպ է դնահատել այդ բնագրի արժեքը. «Հայ մատենագրությունը Ս. Տեղյաց թե՛ Հայկական վանքերու, թե՛ օտար վանքերու մեջ ապրող Հայ միաբանութեանց նկատմամբ դժբախտաբար բառ մը անդամ չէ արձանագրած, հակառակ որ նախնական դարերե սկսյալ, մեր բնիկ աշխարհէն ուխտավորական կարավաններ շարունակ այցելած են Երոսաղեմ, ուխտ ե երկրպագություն Քրիստոսի տնօրինական Ս. Տեղյաց: Հայոց Անաստաս վարդապետը միայն, ինչպես հիշած ենք այլուր, դրի առած է Յուցակ մը Երոսաղեմի Հայ վանորեից մասին: Ան թեև զերծ չէ քննադատութենէ և ձեռնմխութեններէ, ինչ-որ ալ ըլլա սակայն, այդ Յուցակը Հայեցի կարևոր հիշատակարան մը է»¹: Բազում այլ թղթերի նման թեև այն ես չի ընդգրկվել Գիրք թղթոցում, սակայն բարեբախտաբար պահպանվել է և արժանի է պատշաճ ուշադրութեանն ու կարոտ լուրջ հետազոտման:

Անաստասի՝ որպես Յուցակի հեղինակի, անունը արձանագրված է բնագրի վերջում, որպես Երոսաղեմ այցելած Հայ ուխտավոր-վարդապետ, որ Համազասպ Կամսարականի խնդրանքով կազմել է Երոսաղեմի Հայոց վանքերի ցանկը:

Անաստաս վարդապետի հեղինակած երկը մեզ է հասել ուշ շրջանի ձեռագրերով²:

Առաջին անգամ Անաստաս վարդապետի ու նրա երկի մասին խոսում է Մովսէս Կաղանկատվացին³: Նրա «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի երկրորդ դրքի ՄԲ գլուխը վերնագրված է «Անուանք վանորայիցն, որք յԵրոսաղէմ են շինեալ յԱղուանից անուն, զոր ի թղթոյ երա-

1 Մ. Աղավնունի. Հայկական հին վանքեր և եկեղեցիներ սուրբ Երկրին մեջ. Երոսաղեմ, 1931, էջ 158-159:

2 Ժամանակագրորեն վաղագույն ժողովածուն, որտեղ առկա է այդ բնագիրը, Մաշտոցի անվան Մատենադարանի 1770 թվահամարը կրողը գրչագիրն է, ընդօրինակված 1589թ. մի ձեռագրից, որն էլ իր հերթին կազմվել կամ արտագրվել է 1425թ.:

3 Մովսէս Կաղանկատվացի. Պատմութիւն Աղուանից աշխարհի. Քննական բնագիրը և ներածութիւնը Վարագ Առաքելյանի. Երևան, 1983, էջ 285-286:

ենլոյն Անաստասայ առ Վահան⁴ Մամիկոնեան առեալ ուսաք, այս են»: Եթե անգամ չլինեն Անաստասի անվան նշումը, ապա թվարկման մեջ եղած նմանութիւններն իսկ բավարար էին հաստատապես պնդելու, որ Մովսես Կաղանկատվացին իր երկի այդ գլուխը շարադրելիս տրամադրութեան տակ ունեցել է Անաստաս վարդապետի Ցուցակի մի ավելի անխաթար օրինակ և որ ինքը այդ գործից դուրս ոչ մի այլ վանք չի արձանագրում: Այդ նշանակում է միաժամանակ, որ Անաստասի երկը ևս, ինքնուրույն գոյատևելով ավելի քան 14 դար, քիչ փոփոխութիւններ չէ ենթարկվել: Մովսես Կաղանկատվացու երկում պահպանած այդ քաղումներին առաջինն ուշադրութիւն են դարձրել Աստ. Տեր-Հովհաննիսյանցը և Տ. Սավալանյանցը և դրանք օգտագործել Անաստասի հաղորդումների ծանոթագրման ժամանակ:

Անաստասի երկը գիտական շրջանառութեան մեջ է դրել Ղ. Ինճիճյանը, որն իր ձեռքին եղած պակասավոր ձեռագրից հրատարակել է այն իր «Հնախօսութիւն աշխարհագրական...» երկի մեջ: Ղ. Ինճիճյանը մասնավոր քննութեան չի ենթարկել այն և բավարարվել է տողատակի ընդարձակ ծանոթութեամբ, որտեղ ուշագրավ է հեղինակի այն նշումը, թե «այս գիր է իբր վերջին գլուխ տնօրինական տեղեկացն, որ յերուսաղէմ. զորս յետ մի ըստ միողջ թուելոյ դնէ վերնագիր. «Ի յԱգաթանգեղայ պատմութեանէն, որ էր դպրապետ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, վասն վանորէիցն, որ յերուսաղէմ»⁵: «Եւ ապա սկսանի. «Ի ժամանակս թագաւորութեան Տրդատայ և ի հայրապետութեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մեծամեծք հայոց շինեցին վանորայք ի սուրբ քաղաքն յերուսաղէմ, որոց անունք վանորէիցն են այսօրիկ»: Ղ. Ինճիճյանը արձանագրելով, որ «ոչ գտանի յայժմեան գիրս պատմութեան նորին (իմա՛ Ագաթանգեղոսի) զոր ունիմք», ենթադրում է, թե «Ի պատմութեան Ագաթանգեղայ ասելովն՝ տայ մեզ իմանալ, թէ զայս ցուցակ անուանց վանորէից յուրոյն իմն պատմութեան էր դրեալ Ագաթանգեղոս»⁶:

Ցանկանալով հիմնավորել իր ենթադրութիւնը, Ղ. Ինճիճյանը նույն տեղում ավելացնում է. «Եւ չեն ինչ զարմանք զանազան եկեղեցիս շինելն յերուսաղէմ մերոյն Տրդատայ և Լուսաւորչի և նախարարացն: ... Պարտ է ևս համարել, թէ... բազմութիւն ուխտաւորաց ի մերոց հայկազանց յաճախէին զնալ անդր. և նմին իրի դէպ լինէր այլ և այլ նախարարաց զանազան վանորայս շինել ի դիւրութիւն բնակութեան ուխտաւորաց իւրաքանչիւր ցեղից յուրոյն ուրոյն վանս»: Ղ. Ինճիճյանը միաժամանակ զգուշացնում է, թե «այլ չէ պարտ այնպէս իմանալ, թէ այս ամենայն վանորայք... առհասարակ ի ժամանակս Տրդատայ և Լուսաւորչի շինեցան: Յայտ է այս և յանուանէ նոցա. քանզի վանքն, որ յանուն Լուսաւորչի՝

4 1289թ. ձեռագրում՝ Վահրամ: Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. №1531, վայր՝ Հովհաննավանք, ժամանակ՝ 1289, ստացող՝ Համադասպ եպս., թերթք՝ 378, թուղթ, 42,2-32՝ է, 5, երկայուն, ըրորգիր, տող 31, հշտկոն ստացողի՝ 97ա, 123բ, 230բ, 306բ, 318բ, հետագայի՝ 1ա (1651թ.), 377ա (1676, 1733թթ): Բովանգ.՝ Սոկրատայ Աբուստիքոսի Պատմութիւն եկեղեցական, Պատմութիւն վարուց Սեղրեստրոսի, Մովսիսի Կաղանկատուացու Պատմութիւն Աղուանից:

5 Ղ. Ինճիճյան. Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի. 4. երկրորդ. Վենետիկ, 1835, էջ 199, ծան. 1:

6 Նույն տեղում:

յայտ է, թէ գկնի նորա շինեալ եղև, որպէս և Ղևոնդեանցն՝ գկնի նահատակութեան նոցա՝ բազմօք գկնի Լուսաւորչին»⁷: Այս ամենից հետո Ղ. Ինճիճյանը, անծանոթ լինելով Անաստասի հեղինակ լինելու հանդամանքին և կաշկանդված՝ բացատրելու Ագաթանգեղոսի անվան հետ կապվելու պարադան, ստիպված էր առաջադրել իր վարկածը. «Եւ այսպէս, նոյն իսկ պատմութիւն ցուցանէ, թէ Ագաթանգեղոս յայս ցուցակ նշանագրեաց զվանորայս շինեալս ի Տրդատայ և ի Լուսաւորչէ և յոմանց ի նախարարաց իւրոց ժամանակին. իսկ գկնի Ներսէսի՝ յաւելին այլք ի նոյն ցուցակ արձանագրել և զշինեալսն ի Ներսիսէ և յայլոց նախարարաց, ապա յետադայք նորք յաւելին նշանակել և զառումն տաճկաց և հոռոմաց, որք յապա ժամանակս եղեն»:

Անաստաս վարդապետի կազմած Երուսաղեմի հայկական վանքերի ցուցակը XIX դարում ունենում է տասը հրատարակութիւն՝ այդ թվում և թարգմանութիւններ ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով: Հրատարակութիւնների հիմնական բեռը ստանձնում և իրականացնում է Ղ. Ալիշանը, որի հմուտ թարգմանութեամբ էլ այն հրատարակվում է եվրոպական լեզուներով ու դառնում լայն քննարկման առարկա: Ղ. Ալիշանին է պատկանում Անաստասի երկի ստեղծման ժամանակի որոշման առաջնութիւնը: Ծանոթագրելով բնագրի «գրեցին առ երանելի կաթողիկոսն Յոհաննէս արտահայտութիւնը, Ղ. Ալիշանը դրում է. «Այս բաներս տաճկաց (արաբացվոց) տիրելեն առաջ եղած ըսելով պատմիչս, երևի որ Գ Յոհաննէս կաթողիկոսն է դա, ի վերջ Զ դարու և ի սկիզբն է-ին»⁸: Ճշգրտված թվագրմամբ այժմ հայտնի է, որ Հովհաննէս կաթողիկոս Գաբեղենացին դահակալել է 557-574թթ.: Իրականում, Անաստասի նամակը ծնունդն է այն իրադրութեան ու իրադարձութիւնների, որոնք տեղի են ունեցել VI դարի երկրորդ կեսին:

Ղ. Ալիշանի վստահութիւնը Անաստասի երկի նկատմամբ առավել աճել է այն բանից հետո, երբ ձեռնամուխ է եղել թարգմանելու Աբուսահլ Հայի աշխատութիւնը, որի արդյունքում ծնվել է նրա կարևոր աշխատութիւններից մեկը⁹: Աբուսահլի անգլերենի հրատարակիչը¹⁰ «համարձ է եղիպտական եկեղեցյաց թվով 707 և վանորեից՝ 181, բայց ասոնց վրայ կրնար քանի մը այլ ավելցրնել», - գրում է Ալիշանը¹¹:

V-VI դդ. Երուսաղեմի հայոց վանքերի շքեղութեան մասին էին վկայում XIX դարի վերջերին Երուսաղեմի տարբեր հատվածներում կա-

7 Նույն տեղում, էջ 200:

8 Ղ. Ալիշան. Հայապատում. Վենետիկ, 1901, էջ 229, ծան. 1:

9 Աբուսահլ Հայ. Պատմութիւն եկեղեցեաց եւ վանորէից Եգիպտոսի. Վենետիկ, 1895:

10 B. T. A. E v e t t s. Churches and Monasteries of Egypt attributed to Abu Salih, the Armenian. Oxford, 1895.

11 Աբուսահլ Հայ. Պատմութիւն ..., էջ 13-14: «...Յետ զասոնք հիշելու, չեմք կրնար չհիշել խոր զգացմամբ մեր նախնայց հիշած և հանվանն նշանակած յոթանասուներե ավելի հայոց վանքերը Երուսաղեմ և ի մերձավոր տեղիս, զատ եգիպտականաց, Լուսավորչի օրերեն մինչև ի վերջ Զ դարու շինած, բնակված, նորոգված և ավրված: Միթե զուտ ազգային հեղինակ մը այլ Աբուսահլի և Շարուլթի նման չէ՞ր գրած չափավորապես (և ավելի քան զԱնաստաս վարդապետ մեր է՞ դարու) անոնց պատմութիւնը, կամ պիտի ըլլա՞ մեկ մի, որ հետաքննեն անոնց անհետացայլ տեղուանքը և երևան հանն անակնկալ և ոչ իսպառ անհուսալի նշխարքը, արձանագրերն և այլ ի՞նչ գիտեմ» (նույն տեղում):

տարված շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված հայտնա գեղեցիկ խճանկարները¹²: Երուսաղեմի վանքերի ու եկեղեցիների բազմաքանակության մասին վկայություն է պահպանվել նաև Անտիոխ Սորատիգի մոտ¹³:

XIX դարի վերջերից սկսվում է Անաստասի Ցուցակի գիտական ուսումնասիրության մի նոր փուլ: Աստ. Հովհաննիսյանցն ու Տ. Աավալանյանցը, համոզված լինելով Անաստասի բերած վանքերի իրական գոյություն մեջ, իրենց աշխատություններում փորձում էին ամենայն բարեխղճությամբ տեղադրել հիշատակված վանքերը՝ առ այդ վկայակոչելով իրենց հայտնի միջնադարյան այլալեզու սկզբնաղբյուրներից քաղված վկայություններ, վիմագիր արձանագրություններ և այլ նյութեր¹⁴:

Անաստասի երկր իր աշխատության մեջ ներկայացրել է նաև Գ. Զարբանյանը, գրելով, թե «Հավանականաբար անհարազատ է այս գրվածքը, բայց ունենալով նաև պատկառելի հնութուն մը՝ ի վերջ յոթներորդ կամ ի սկիզբն ութերորդ դարում»¹⁵:

Մ. Օրմանյանը VI դարավերջի իրադարձությունների շարադրման ժամանակ օգտագործում է նաև Անաստասի երկում պահպանված վկայությունները, որոնք նրան որևէ կասկածի տեղիք չէին տալիս իրենց հավաստիությունները¹⁶:

Անաստասի երկին անդրադարձել է նաև Ն. Մառը՝ առանց հատուկ ուսումնասիրության փորձ ձեռնարկելու: Ն. Մառը թարգմանել ու հրատարակել է XII–XIII դարերի ձեռագրերից մեկում պահպանված Եփրեմ Ասորու ու նրա Սահակ աշակերտի միջև զրույցի երրորդ անձի կողմից գրառման տեսքով ներկայացված երկու

12 Տե՛ս «Նոր դար», Թիֆլիս, 1894, 23 հուլիսի, 11 օգոստոսի: Dr. R. R i e s s. Reste eines alten armenischen Klosters auf dem Olberg und dieselbst aufgefundenen Inschriften – Zeitschrift des Deutschen Palastina-Vereins, VIII, Leipzig, 1885, S. 155–161. H. G u t h e. Mosaiken mit armenischer Inschrift auf dem Olberge. – Mitteilungen und Nachrichten des Deutschen Palastina-Vereins. Leipzig, 1895, S. 51–53. Գ ա Ր Ե Գ Ի Ն Հ ո վ ս Ե ֆ յ ա ն. Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության. Հ. Բ, Երևան, 1987, էջ 340–342: Գ. Հովսեփյանը հետազոտում հղելով իր այս աշխատանքը, գրել է. «Այն կարծիքն ենք հայտնել, թե (մոզաիկ արձանագրությունը Զիթենաց սարի վերա) առնվազն թ–ժ դարում գիր պետք է համարել, այժմ ընդունում ենք ոչ ուշ, քան Զ–է դարերի» (տե՛ս Գ. վ. Հ ո վ ս Ե ֆ յ ա ն. Գրչություն արվեստը հին հայոց մեջ. մասն Գ. Քարտեզ Հայ Հնագրության. Վաղարշապատ, 1913, էջ 5): Б. Н. А р а к е л я н. Армянская мозаика IV–VII вв. – «Լրաբեր Հաս. գիտ.», 1971, № 3, էջ 17–25:

13 «Եվ երբ (պարսիկները – Պ. Չ.) հասան Երուսաղեմին, նրանց ժողովրդի առաջնորդներն ու իշխանները գնացին դիտելու քաղաքն ու նրա պարիսպները: Եվ երբ տեսան վանքերի ու հավատացյալների կացարանների բազմությունը, որ կային քաղաքի շուրջը, ղգաստացավ նրանց միտքը և ցանկացան հատուկություն կնքել քաղաքի բնակիչների հետ (А н т и о х С т р а т и г. Пленение Иерусалима персами в 614 г. Грузинский текст исследовал, издал, перевел и арабское извлечение приложил Н. Мара, СПб., 1909, с. 25–29):

14 Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն ց. Ժամանակագրական պատմություն ս. Երուսաղեմի. Հ. 1, Երուսաղեմ, 1890: Տ ի գ Ր ա ն Ս ա վ ա լ ա ն յ ա ն ց. Պատմություն Երուսաղեմի. գրաբար բնագիրեն աշխարհաբարի վերածնեց Մեսրոպ եպս. Նշանյան. Հ. 1. Երուսաղեմ, 1931: Մ կ Ր տ ի չ Ա Ր Ժ Ր Ո Ն յ ա ն. Սորատիգի վերջին քաղաքի Երուսաղեմի. Երուսաղեմ, 1859:

15 Հ. Գ. Զ ա Ր Բ Հ ա ն ա լ յ ա ն. Հայկական հին դպրության պատմություն (Դ–ժ Գ դար). Վենետիկ, 1897, էջ 229:

16 Մ ա Ղ ա ք ի ա ա Ր ք Ե ա Ս. Օ Ր մ ա ն յ ա ն. Ազգապատում. Պեյրութ, 1959, էջ 562–563:

փոքրիկ բնագիրը («Վկայութիւնք վասն ծննդեան Քրիստոսի, մկրտութեան», «Նորին իսկ երանելոյն եփրեմի ասացեալ»), որոնցից առաջինը ուղեկցվում էր նաև հայատառ ասորերեն տեքստով, և հայերենը ներկայացված էր որպես թարգմանութիւն ասորերենից, իսկ երկրորդը բաղկացած էր ընդամենը մի քանի պարբերութիւններից և չունէր ասորերեն զուգահեռ: Երկրորդ բնագրում հաղորդվում է, թե «եւ ի կատարման սուրբ ժողովոյն կոչեաց մեծ արքայն (Կոստանդինը) զհզոր թագաւորն (Տրդատ) առ ինքն և զսուրբ Լուսաւորիչն Գրիգորիսն մեծաւ փառաւորութեամբ շնորհ ունելով նոցա յանհոգս առնելով դաստուածահրաման և զմեծ ժողովն Նիկիոյ:

Եւ եկեալ նոքաւք յերուսաղէմ և բաժանեալ սեպհականեցին զսուրբ տեղիսն տէրունական, շինեցին տաճարս փառաւորս և աստուածաբանակս և քարոզ կարդալով ընդ չորս կողմ աշխարհի: Եթէ ոք որ և շինիցէ եկեղեցի Քրիստոսի քարամբք և կրով և սրբաշինով ամենայն ուրէջք ի շէնս և յանշէնս՝ ազատ լիցին ի յարքունեաց հարկէ ազդաց յազգս:

Եւ յայնմ արէ առեալ եկեղեցիքն հաստատութիւն ի ձեռս երկուց թագաւորացն, որ եղեն անդրանիկք ի հաւատ Քրիստոսի փառաւորելով զամենասուրբ զերրորդութիւնն զհայր և զորդի և զսուրբ զհոգին այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն»¹⁷:

Ինչպես հայտնի է, նման հիմնավորումներ հայերի կողմից առաջադրվում էին դեռևս VI դարում և նպատակ ունեին բացատրելու հայերի բազմաքանակութիւնն ու իրավունքները Երուսաղեմում, պաշտպանելու հայոց եկեղեցիների ու վանքերի դավանական կողմնորոշումը բյուզանդական եկեղեցու հալածանքներից: Այլ կերպ է ընկալել այդ հատվածը Ն. Մառը: Եփրեմ Ասորուն (306-373) վերադրված վերջին երեք սլարբերութիւններից Ն. Մառի ստացած բացասական տպավորութիւնը այնքան խորն էր, որ նա անմիջապես տողատակում, հիշելով Անաստասին, գրում է. «Հաստատպես մնում է տարակուսել, թե ինչպե՞ս է նույնպիսի անվավեր հուշարձանը Երուսաղեմի յոթնասուն հայկական վանքերի մասին, որ հայտնաբերվել է XVII դարի ձեռագրերում, հ. Ալիշանը համարում VII-VIII դարի երկ (Archives de l'Orient latin, 1884, էջ 395, և հատկապես «Բաղմավեպ», 1882, էջ 23): Եթե վստահենք հուշարձանի հաղորդումներին, անտեսելով ժամանակագրութիւնն ու ընդհանրապես նրա հաղորդած փաստերի հավաստիութիւնը, ապա մենք չպետք է կանգ առնենք VII դարի վրա, որովհետև հուշարձանը ինքն իրեն ներկայացնում է որպես «Գրիգոր Լուսավորչի քարտուղար Ադաթանդեղոսի Պատմութիւն» մաս»¹⁸:

Այսպիսով, Ն. Մառի բերած հիմնավորումներով, Անաստասի ցանկը անվավեր է, որովհետև

Ա. Զեռագիրը իբր միայն XVII դարից է և ոչ ավելի վաղ:

17 Е ф р е м С и р и н. О днях празднования рождества. Об основании первых церквей в Иерусалиме. Армянский текст с сирийскими отрывками в армянской транскрипции XII—XIII века исследовал, издал и перевел Н. Марр.— Тексты и разыскания по армяно-грузинской филологии, 1, СПб., 1900, с. 54-55.

18 Նույն տեղում, էջ 34:

Բ. Ցանկի սկզբում նշվում է, թե այն իբր Ագաթանգեղոսի պատմությունից է վերցված:

Գ. Սերտ կապ է զգացվում «Դաշանց թղթի» հետ, իսկ վերջինիս կեղծիք լինելը անառարկելի է համարվում¹⁹:

Այս գիտարկումները զորավոր փաստարկ են համարվում մերժելու երուսազեմում ու շրջակայքում IV–VI դարերում մոտ յոթանասուն հայկական վանքեր ու մենաստաններ լինելու սլարագան, և Անաստասի Ցուցակը նկատելու որպես անվավեր հորինվածք²⁰:

Անաստասի ցանկը քննությունն է ենթարկվել Հայ մեծանուն պատմարան Ն. Ագոնցի «Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում» աշխատությունից մեջ: Նախարարական տների ուսումնասիրության առիթով Ն. Ագոնցը անգրադառնում է Գահնամակի քննությունը և այդ է նրան բերում Անաստասի Ցուցակի հետազոտման անհրաժեշտությունը, որտեղ առավելագույնս են թվարկված նախարարական տները: Ն. Ագոնցը, որին արդեն հայտնի էր Անաստասի երկի մասին իր ուսուցիչ Ն. Մառի բացասական վերաբերմունքը, գրում է. «Գահնամակի հետքերը գտնում ենք նաև երուսազեմի հայկական վանքերի մասին հայտնի Ջրուլցի մեջ: Անաստաս վանականը իշխան Համագասպ Կամսարականի խնդրանքով, որ պատրաստվում էր այցելել սուրբ վայրերը, կազմում է երուսազեմի այն եկեղեցիների նկարագրությունը, ավելի ճիշտ ցանկը, որոնք որպես թե կառուցել են Հայ իշխանները: Դրանց թիվը հասնում է 70-ի, մի թիվ, որը անմիջապես մտածել է տալիս Գահնամակի ազդեցությունից մասին և ստիպում կապ փնտրել նրա և 70 գահերի միջև: Դժբախտաբար չի կարելի ստուգել, թե Գահնամակը ինչ տեսքով է մտել Անաստասի գործի մեջ, քանի որ սլահայանված խմբագրությունից մեջ ոչ բոլոր եկեղեցիներն են կրում իշխա-

19 Վերջին ուսումնասիրությունները ոչ միայն հաստատում, այլև թվագրում են Տրդատի և Կոստանգիանոսի հանգիստումն ու դաշինքի կնքումը (324 թ. նոյ. – 325 թ. սկիզբ): Տե՛ս Rev. Vrej Nerses Nersessian. Did Trdat meet Constantine I the Great? – «Հայկազյան հայագիտական հանդես», Հ. ԺԹ, Պեյրութ, 1999, էջ 65–70:

20 Իր հաջորդ աշխատություններից մեկի մեջ Ն. Մառը, սակայն, «արքայուն» տերմինի իր բացատրության հիմնավորման համար օգտագործում է Անաստասի Ցուցակում բերված մի արտահայտություն, որը թեև համարելով հուշարձանի մեջ կատարված հետագա հավելում, սակայն գրանով իսկ փաստորեն ընդունում է բուն հուշարձանի վավերական ու ավելի վաղ գոյություն ունեցած լինելու փաստը: Պատմելով մինչ արաբական նվաճումների շրջանում երուսազեմում Հայերի նկատմամբ եղած հալածանքների մասին, Անաստասի մոտ նշվում է, որ այնտեղ թուլատրվում է բնակվել միայն նրանց, «որք ողջ ունին զգալանություն թագաւորին» (Н. Я. Марр. Аркаун монгольское название христиан в связи с вопросом об армянах халкедонитах. СПб., 1905, с. 62–63. Հմտ. Н. Я. Марр. Кавказский культурный мир и Армения. Ереван, 1995–96, с. 270): Անաստասի բնագրում ասված է. «Երանելույն Անաստասայ Հայոց վարդապետի գրեալ դանուանս վանորէիցն երուսազեմի ի խնդրոյ իշխանին Համագասպա Կամսարականի Պալհաւունոյ, որ կամէր գնալ յերուսաղէմ, որ և գնաց իսկ և արժանացաւ աստուածակոխ սուրբ տեղեացն, ... և ի Հայրապետացն երուսաղէմի թափեաց զՀայոց վանորայսն, որք կամէին յեղափոխել զկարգս նոցա և զհաւատարստ Յոբնաղի քարոզութեան: Այլ և յետոյ բազում նեղութիւնս կրեց Հարքն Հայոց և վանորայքն ի պատրիարդացն, Հոռոմոց և այլոց, որ զկնի նոցա նստան սակս հաւանելոյ չորրորդ ժողովոյն Քաղկեդոնի և խոստովանութեան երկու բնութեանց: ... Հրաման թագաւորին խստանայր ի վերայ սրբոյ քաղաքին և Հայրապետացն, զի մի բնակեացն անգր ի Հայոց կրօնաւորաց և յակոբիկ ասորի կամ յեգիպտացուցն, այլ միայն՝ որք ողջ ունին զհաւատս թագաւորին և զՀոբնաղի սահմանագրութիւնն» (Ղ. Ա. Լիշան. Հայապատում, էջ 229):

նական տների անվանումները, իսկ նրանցից շատերն էլ նշված են այն սրբերի անուններով, որոնց նվիրված են»²¹:

Տողատակ ծանոթագրություն մեջ Ն. Ադոնցը առանձնացրել է 22 իշխանական տոհմանուններ, որոնք առկա են Անաստասի Յուցակի մեջ: Վերոբերյալ հատվածի մեջ Ն. Ադոնցը իր վերաբերմունքը արտահայտել է Անաստասի Յուցակի նկատմամբ մի քանի արտահայտություններով. անվանելով այն զրույց (сказание), իսկ եկեղեցիներն էլ՝ որպես թե (ЯКОБИ) կառուցված հայ իշխանների կողմից: Ն. Ադոնցը, այնուամենայնիվ, փորձում է իր մոտեցումը հուշարձանի նկատմամբ ճշգրտել. «Զրույցը, անկասկած, առասպելական բնույթ ունի, թեև զուրկ չէ մի քանի հնագույն գծերից»²²: Ն. Ադոնցը չէր կարող չըջանցել այն փաստը, որ Մովսես Կաղանկատվացու աշխատության մեջ ուղղակի նշվում են Անաստասի անունն ու դործը, ավելին, Մովսես Կաղանկատվացին Անաստասի նամակից է վերցնում Աղվանից վանքերի ցանկը և նա ստիպված է արձանագրել, թե Անաստասի նկարագրությունը «վերաբերում է «Աղվանից աշխարհի պատմության» նախորդող ժամանակներին, քանի որ այստեղ հիշատակվում են Անաստասի աշխատությունը և նրանից մի քանի քաղվածքներ, որոնք վերաբերում են Աղվանից եկեղեցիներին»²³: Ն. Ադոնցի առաջ, սակայն, ծանոթում է մեկ այլ խնդիր. պարզվում է, որ Մովսես Կաղանկատվացին (գիրք Բ, գլուխ Ա) 628–30-ական թվականների դաճերի համար նշում է Աղաթանդեզոս և ոչ՝ Գահնամակ: Ն. Ադոնցը փորձում է բացատրել. այդ ապացուցում է, «որ այն ժամանակ Գահնամակը դեռևս դրականության մեջ հայտնի չէր: Այսպիսով, նկատի ունենալով մեզ հասած Գահնամակի ոչ պաշտոնական ծագումը, նրա երևան դալը պետք է վերագրել VII դարից հետո ընկած ժամանակին»²⁴. Գահնամակի հետագա ուսումնասիրությունները, սակայն, չհաստատեցին Ն. Ադոնցի ենթադրությունները: Գահնամակի նախարարական տների ցուցակը, չնայած դրչական աղավաղումներին, մեղ է հասել գրեթե անխաթարված վիճակում, ուստի ամենադուրյան իսկ չափով կասկածել վավերականությանը, անիմաստ է: Ինչ վերաբերում է որոշ աղավաղումների, ապա դրանք վերականգնելի են, դրում է Բ. Հարությունյանը և համոզիչ կերպով ցույց տալիս, թե Գահնամակը արտացոլում է միայն 388-408 թթ. ընկած ժամանակահատվածը և ոչ մարզպանական շրջանը, ինչպես կարծում էր Ն. Ադոնցը²⁵:

Ն. Մառի ու Ն. Ադոնցի վերոհիշյալ վերապահումները մեծապես նպաստեցին Անաստասի երկի նկատմամբ թերահավատ վերաբերմունքի

21 Н. А. Д о н ц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908, с. 260. Ն ի կ ո ղ ա յ ո ս Ա դ ո ն ց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. Երևան, 1987, էջ 290-291:

22 Ն ի կ ո ղ ա յ ո ս Ա դ ո ն ց. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 291:

23 Նույն տեղում:

24 Նույն տեղում, էջ 327: Օրինաչափ է հարցը. թե ինչպե՞ս է Գահնամակը ծանոթ Անաստասին, իսկ անծանոթ՝ Անաստասից օգտվող Մովսես Կաղանկատվացուն: Ավելին՝ պարզվում է, որ Գահնամակն ու Զորանամակը ծանոթ են Մովսես ինքնացուն, որին ևս Ն. Ադոնցը ստիպված է V դարի հեղինակ չհամարել (նույն տեղում, էջ 271-272):

25 Բ. Հ. Հ ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Յ ա ն. «Գահնամակի» թվագրման հարցի շուրջը. - «Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 2, էջ 70-74:

Հետագա ձևավորմանը, ուստի հարկ է որոշ պարզաբանումներ մտցնել երկրի մասին նրանց մոտեցման հարցերում:

Իրականում Անաստասի մոտ Գահնամակի օգտագործման ոչ մի հետք չկա:

Ա. Թվարկվում են մի շարք նախարարական տներ, որոնք մեկենասել են Երուսաղեմում կառուցված վանքերին, Անաստասի մոտ նման նախարարական տների քանակը ընդամենը 16-ն է: Ուշագրավ է, որ Արծրունյաց տոհմը Գահնամակում ունենալով 3 բարձ, ըստ Անաստասի Երուսաղեմում ուներ միայն մեկ վանք: Մամիկոնյանները ունենալով 2 բարձ, հովանավորում էին 6 վանքի: 2 բարձ ունենալով Գահնամակում, Սյունիները հովանավորում էին 6 վանքի: Ամատունիները և Սահառունիները 1-ական բարձ միայն ունենալով՝ ունեին 2-ական վանք:

Բ. Գահնամակի ու Անաստասի կազմած ցանկերի մեջ նախարարական տների հերթականության ոչ մի պահպանում չի նկատվում: Անաստասի մոտ վանքերի հերթականությանը շարագրված է Երուսաղեմում ըստ նրանց ունեցած տեղի՝ աշխարհագրական գիրքի՝ տեղանքի հնարավոր ճշգրիտ մատնացուցումով:

Գ. Անաստասի մոտ կան արքունի ծախսով կառուցված վանքերի անուններ, որոնք չէին կարող լինել Գահնամակում:

Գ. Աղվանքի տոհմերը չեն մտել Գահնամակ, իսկ Անաստասի մոտ նշված Աղվանից կոչվող վանքերի անվանումներով մենաստաններ ու սրբավայրեր պահպանվել են Արցախում ընդհուպ մինչև մեր օրերը: Այն հանդամանքը, որ Անաստասի Ցուցակի մեջ Աղվանից (և Այունյաց) վանքերը ներկայացված են առանձին խմբավորումով, վկայում է այն մասին, որ այդ ցանկի կազմելու ժամանակ նրանք, ի տարբերություն վրաց եկեղեցու, միաբնակության դիրքերում ու հայկական մնալով հանդերձ՝ թեմական առումով առանձին միավորներ էին ներկայացնում: Ավելին, Անաստասի Ցուցակում հակադրվում է այն իրողությունը, թե «Պանդայ վանքն սուրբ Կարապետ, յարևելից ի կողմն Ձիթենեաց սուրբ լերին շինեցաւ արքունի ծախիւք յանուն սուրբ Կաթողիկէին, որ ի Վաղարշապատ քաղաքի, և է ի ձեռս աղուանից»: Ուշագրավ է, որ այդ վանքը թեև «է ի ձեռս աղուանից», սակայն մտցված չէ Աղվանից վանքերի ցանկի մեջ, որ բերված է Ցուցակի վերջին մասում: Հայոց եկեղեցու պատմության մեջ որպես այդպիսի ժամանակահատվածներ, հայտնի են VI դարի երկրորդ կեսը և VII դարի առաջին տասնամյակները, երբ Աղվանքի համար պայքարը հատկապես սրված էր միաբնակ ու երկաբնակ հոսանքների միջև:

Ե. Անաստասի Ցուցակի ավանդազրույց կամ անվավեր լինելը բացառվում է, որովհետև անիմաստ էր կազմել գոյություն չունեցող վանքերի ցանկ՝ նրանց նկատմամբ հավակնություն ներկայացնելու համար: Ավելին, այն բոլոր սրբատեղիները, որոնց հայերի իրավասության ներքո գտնվելը հաստատվում է նաև այլ սկզբնաղբյուրներով և անառարկելի է նրանց գոյությունը հետագա ժամանակներում, բացակայում են Անաստասի Ցուցակում: Հետագա գրիչներին զարմացրել է, անշուշտ, այդ մենաստանների բացակայությունը ցանկի մեջ ու ավելացվել է նրանց կողմից մեկ պարբերությամբ ցանկից դուրս՝ առանց խաթարելու Անաստասի կազ-

մած Յուցակը՝ վերագրելով նրանց կառուցումը Տրգատ թագավորին ու Գրիգոր Լուսավորչին:

Ասել է թե, նշված պարբերությունը գոյությունը ամենևին չի կարող փաստարկ ծառայել Անաստասի Յուցակի նկատմամբ վերապահության համար:

Անաստասի նկարագրությունը միանգամայն հավաստի, թեև ոչ հանգամանալի, սկզբնաղբյուր է գիտվում Երուսաղեմի հայ գաղթօջախի լավագույն դիտակներին մեկի՝ Մկրտիչ Աղավնունու կողմից: Մ. Աղավնունին, սակայն, Անաստասին համարում էր VIII դարի հեղինակ²⁶:

Հեղինակի ինքնությունը մասին իր հատուկ կարծիքն է հայտնել Ն. Ակինյանը Մկրտիչ Աղավնունու «Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի» գրքի հրատարակման առիթով գրած գրախոսության մեջ: Արձանագրելով այդ գրքում Անաստասի մասին բառահոգովածի բացակայությունը, գրում է. «Անաստասի վ. հայ էր, երբեմն կոչված Վահան Խորխոռունի և ըյուղանդական բանակեն հոչակված հակառակ Հերակղի կայսր հոովմեական: Ուրիչ տեղ առիթ սլիտի ունենանք ներկայացնելու Մինայի լեռան այս միանձնավորն յուր իսկական դեմքով»²⁷: Մեղ առայժմ հայտնի չէ, կատարե՞լ է Ն. Ակինյանը իր խոստումը:

Ղ. Արիշանը Անաստասին համարում էր VII դարի հեղինակ:

Ուրույն տարբերակ է առաջարկել մեծավաստակ հայագետ Ն. Պողարյանը: Նա Անաստաս վարդապետին նույնացնում է VII դարի հայոց Անաստաս Ա. Ակոռեցի (661-667թթ.) կաթողիկոսի հետ²⁸: Քանի որ այս տեսակետը, հենվելով Ն. Պողարյան հայագետի հեղինակությունը, սկսում է հետևորդներ ունենալ, գրեթե ամբողջությամբ մեջ ենք բերում նրա կարծիքը: Նա գրում է. «Անաստաս Ակոռեցի ծնած է մոտավորապես է գարու սկիզբը Մասեացոտն գավառի Ակոռի գյուղը: Իր մանկության և երիտասարդության մասին տեղեկություններ կը պակսին: Ունինք Անաստաս կրոնավոր մը, որ այցելած է Աուրբ Երկիր և հայ վանորեից Յուցակ մը գրած է Համադասս (Մամիկոնյան⁹) իշխանին խնդրանքով (տպ. Վենետիկ, 1896): Հավանականություն հեռու չէ, որ հիշյալ Անաստաս կրոնավորը ըլլա նույն ինքն Ակոռեցին: Անաստաս կրոնավորի այցը տեղի ունեցած է արաբական աշխարհակալության առաջին շրջանին, թերևս 636-650 թվականներուն: Ան պատած է Եգիպտոս, Արնայ և Հայաստան վերադարձին պաշտոնի կոչված է կաթողիկոսարանի մեջ, իբրև սենեկապետ կամ փոխանորդ Ներսես Գ. Շինող կաթողիկոսի (651-661): Ներսես Շինողի մահեն ետք ինքը՝ Անաստաս կը դառնա կաթողիկոս և կը վարե եկեղեցվո վերին տեսչությունը վեց տարի (661-667): Այդ միջոցին իր ծննդավայրին՝ Ակոռի մեջ շինել կու տա վանք մը, փառավոր եկեղեցիով, որ երկար դարեր տոկալե ետք, կը կործանի 1840 տարվո մեծ երկրաշարժին: Անաստաս կթղմտածած է նաև հայ եկեղեցին օժտել հաստատուն տոմարական դրությունը

26 Մ. Աղավնունի. Հայկական հին վանքեր..., էջ 18:

27 Ն. Ակինյան. Մկրտիչ եպիսկոպոս Աղավնունի, Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի. Երուսաղեմ, 1929, 80, էջք ԺԶ+ 544. - «Հանդես ամսօրյա», 1930, №1-12, էջ 368:

28 Ն. Պողարյան. Հայ դրողներ (Ե - ԺԷ դար). Երուսաղեմ, 1971, էջ 80-81:

մը: Այդ ուղղությամբ կատարելիք աշխատանքը կը հանձնե հանճարեղ տոմարագետ Անանիա Շիրակացիի: Անանիա հաջողությամբ գլուխ կը հանե իրեն հանձնված գործը, բայց Անաստաս կաթողիկոսի վերահաս մահը պատճառ կը դառնա, որ տոմարական փոփոխութեան ձեռնարկը մնա առանց հետևանքի: Հավանական կը համարվի, որ Անաստաս կ'իթղ. թաղված ըլլա իր շինել տված եկեղեցիին քովը»²⁹: Նույն տեսակետն է արձանագրում նաև Աբրահամ Տերյանը³⁰:

Անաստաս վարդապետի նկարագրութիւնը մտել է Հ. Անասյանի կազմած «Հայկական մատենագիտութեան» մեջ որպէս առանձին բառահոգոված, որտեղ և համառոտ տեղեկանք է տրված հեղինակի ու նրա երկի մասին³¹: Հ. Անասյանը համոզված է, թե Անաստասը եղել է «է դարի հայ ուղևոր, որ այցելել է Պաղեստին և համառոտակի նկարագրել այնտեղ գտնվող Հայկական վանքերը»: Նշելով, որ Անաստաս վարդապետը դրել է Համազասպ Կամսարականի խնդրանքով, Հ. Անասյանը, նկատի ունենալով Մովսես Կաղանկատվացու հաղորդումը, կարծում է, թե «մի առանձին ցուցակ էլ Վահան Մամիկոնյանի խնդրանքով կազմել է Երուսաղեմի Աղվանից վանքերի մասին, անշուշտ նախկին ցուցակից հանելով, բայց տեղ-տեղ մանրամասնութիւններով: Վերջինս պահված է Մովսես Կաղանկատվացու մոտ, իբր «ի թղթոյ երանելոյն Անաստասայ առ Վահան (կամ Վահրամ) Մամիկոնյան» (հ. Բ, գլ. ՄԲ)»³²: Հ. Անասյանի ենթագրութիւնը կրկնում է Ա. Մնացականյանը՝ հավանական համարելով վերջին այս եզրակացութիւնը. «Անաստաս վարդապետը, որ 7-րդ դարի հեզինակ է համարվում, կազմել է երկու ցանկ, մեկը Համազասպ Կամսարական Պահլավունու, իսկ մյուսը՝ Վահան Մամիկոնյանի պահանջով: Հեղինակի անունով առանձին պահպանվածը՝ Համազասպ Կամսարականի պատվիրածն է, իսկ Մովսես Կաղանկատվացու օղտագործածը՝ Վահան Մամիկոնյանի: Այդ երկու ցանկերի տարբերութիւնը կայանում է հիմնականում նրանում, որ առաջինն ավելի ընդարձակ է և բովանդակում է նաև Երուսաղեմյան Հայկական վանքերի ցանկը: Արդյոք երկրորդում ևս եղել են Հայկական վանքերին նվիրված տողերը, թե՛ ոչ, Մովսես Կաղանկատվացին այդ մասին չի խոսում, բայց դա հավանական է: Այդ ցանկերում կան մի քանի մանր, երկրորդական նշանակութեան տարբերութիւններ»³³:

29 Նույն տեղում: Ն. Պողարյանը, բացի Անաստաս վարդապետի հետ նույնացման ենթադրութիւններից, մնացածը վերապատմում է ըստ Հովհաննես Դրասխանակերտցու: Տե՛ս Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն հայոց. Թիֆլիս, 1912, էջ 90-92:

30 Abraham Terian. Armenian Writers in Medieval Jerusalem.— Journal of the society for Armenian studies. Vol. 6, (1992, 1993), 1995, p. 16. Հմմտ. R. W. Thomson. A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD. Brepols Turnhout, 1995, p. 324.

31 Հ. Անասյան. Հայկական մատենագիտութիւն. հ. Ա. Երևան, 1959, էջ 825:

32 Նույն տեղում:

33 Ա. Շ. Մնացականյան. Աղվանից աշխարհի դրականութեան հարցի շուրջը. Երևան, 1966, էջ 97-98: Մովսես Կաղանկատվացու աշխատութեան նշված գլխի վերնագրի մեջ, մեղ թվում է, արդեն կարելի էր գտնել Հարցադրման պատասխանը: «Անուանք վանորէիցն, որք յԵրուսաղէմ են շինեալ յԱղուանից անուն, զոր ի թղթոյ երանելոյ Անաստասայ առ Վահան Մամիկոնեան առեալ ուսաք, այս են» ձևակերպումից իսկ հայտնի է, որ թղթից վերցված են միայն այն վանքերի անվանումները, «որք շինեալ են յԱղուանից անուն»: Հակառակ դեպ-

Ժամանակի առումով հաջորդ ուսումնասիրությունը Անաստաս վարդապետի Յուզակի մասին Ավետիս Սանջյանի երկու աշխատություններն են, որոնցից մեկի մեջ, որ նվիրված է Սիրիայում հայ համայնքների պատմության ուսումնասիրությանը օսմանյան տիրապետության ներքո,³⁴ նա զետեղել է մեկ ընդարձակ պարբերություն՝ ծանոթությամբ հանդերձ, իսկ մյուսը հատուկ հոդված է³⁵ Անաստաս վարդապետի և նրա Յուզակի մասին, որտեղ հրապարակված է նաև ընդհիրը՝ հայտնի ձեռագրերի համեմատությամբ: Առաջին աշխատության մեջ Ա. Սանջյանը նշելով հանդերձ, որ Անաստասի Յուզակը օգտագործված է Մովսես Կաղանկատվացու երկում ու ընդունելով նաև նրա հին լինելու հանգամանքը, այնուամենայնիվ ձեռնպահ է մնում աղբյուրագիտական քննական մոտեցում ցուցաբերելուց և զգուշանում է վստահել Անաստասի երկին՝ ելնելով միայն այն «փաստից», որ Գողգոթան և մի շարք այլ սրբատեղիներ, որոնք, ինչպես ասվեց, ակնհայտորեն ավելացված են հետագայում՝ ցանկից դուրս՝ մեկ պարբերությամբ, Անաստասի մոտ իբր հայտարարված են որպես Տրդատի ու Գրիգոր Լուսավորչի կողմից հիմնված կառույցներ: Իր այդ գրույթի հիմնավորման նպատակով Ա. Սանջյանը ձեռնամուխ է եղել հաջորդ հոդվածի հրապարակմանը: Ի պատիվ հեղինակի պետք է ասել, որ նա բարեխղճորեն հավաքել և կազմել է օտարալեզու հրապարակումների մատենագիտություն, սակայն վրիպել է օգտագործելու անմիջականորեն հարցի հետ սերտ կապ ունեցող այլ հրապարակումներ, որոնք և թույլ կտային ավելի ճշգրիտ թվագրելու Անաստասի երկը:

Հայ մատենագրության մեջ ոչ Անաստաս վարդապետի և ոչ էլ նրա կազմած Յուզակի մասին Մովսես Կաղանկատվացու վերոբերյալ վկայությունից բացի այլ վկայություն չունենք: Բնագրի հետ կապված ըստ հարցերի պատասխանը, ըստ այդմ, փնտրելի է միայն բնագրի աղբյուրագիտական ու պատմական քննության մեջ: Արդեն այն փաստը, որ Մովսես Կաղանկատվացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» աշխատության Բ գրքում հատուկ գլուխ է առանձնացված Անաստասի գործից քաղված նյութը ներկայացնելու համար, ցույց է տալիս, որ այդ նկարագրությունը կար VII դարում³⁶, իսկ Անաստասը «երանելի» էր արդեն Մովսեսի ժամանակ³⁷:

քում վերնագիրը կունենար այն ձևակերպումը, որպիսին մենք հանդիպում ենք Մովսես Կաղանկատվացու մոտ այլ գլուխների գեպքում, այն է՝ «Վասն վանորայիցն աղուանից, որք յերուսաղէմ», կամ «Անուանք վանորայիցն Աղուանից», և կամ «Թուղթ Անաստասայ...» առանց վերնագրի մեջ հիշատակելու, թե Անաստասի թղթից են վերցված այդ տեղեկությունները:

³⁴ The Armenian Communities in Syria under Ottoman Dominion by Avedis K. S a n j i a n. Harvard University press, Cambridge, Massachusetts, 1965, p. 3-4, 312-314.

³⁵ Le Museon, 1969, N 82, fasc. 3-4, p.268-275.

³⁶ Մովսես Կաղանկատվացու Պատմության աղբյուրների մասին տե՛ս А. А к о п я н. Албания - Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987, с. 177- 210.

³⁷ Անաստաս վարդապետի Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի (661-667թթ.) հետ նույնացման փորձի ժամանակ Նորայր եպ. Պողարյանը, սակայն, հենվում է միայն անձնանունների նույնության վրա, չըջանցելով ծննդավայրի մասին եղած տարբեր ցուցումները (Հերապոլսեցի և Ակոռեցի): Տե՛ս Ն. Պ ող ա ր յ ա ն. Հայ գրողներ, 1971, էջ 80-81:

Առաջինը, որ աչքի է զարնում Անաստասի նկարագրութան մեջ, Երուսաղեմի հայոց վանքերի անշուք, ավերված կամ արդեն իսկ խլված լինելու արձանագրումներն են: Հայկական 72 վանքերից կանգուն են և դեռևս հայերին են պատկանում միայն 55-ը (այդ թվում և աղվանից³⁸ կոչվածները):

Ի տարբերություն այն մտայնության, թե «յերուսաղեմ գոողգոթայ՝ գտեղի խաչելութեանն Քրիստոսի և զսուրբ Յակովբն, և տեղի մի պատարագի ի սնարս սուրբ Յարութեանն» հայերը ստանում են Տրդատի ու Գրիգոր Լուսավորչի Հռոմ այցելության ժամանակ, Անաստասի մոտ ներկայացված է հետևյալ տեսքով. «Ի ժամանակս թագաւորութեան Մեծին Տրդատայ և ի հայրապետութեան սրբոյն Գրիգոր Լուսաւորչին շինեցան ի մեծամեծ իշխանացն մերոց ի սուրբ քաղաքն Երուսաղեմ վանորայք բազումք, որոց ականատես եղէ գրելով յայս գիւրաքանչիւրսն յականէ յանուանէ»: Ասել, թե Անաստասի ցուցակագրմամբ հայերը հավակնում են միայն այն մենաստաններին, որոնք կառուցվել են հայերի՝ հայ իշխանների, նախարարական տների կամ արքունի գանձով, և ոչ այն մենաստաններին, որտեղ այլևայլ ժողովուրդների ներկայացուցիչների հետ բնակվում էին նաև հայազգի անապատականներ ու միաբաններ: Վերջին կարգի հայ ուխտավորների ու միաբանների մասին եթե վկայություններ են պահպանվել նաև V-VII դարերի հունարեն գրված և տարբեր լեզուներով թարգմանված մի շարք վարքերի ու նկարագրությունների մեջ, ապա զուտ հայկական մենաստանների առկայության ապացույցներ են Երուսաղեմում հայտնաբերված հայերեն արձանագիր խճանկարների գյուտերը³⁹: Անաստասի Յուդայի վերջում նշվում է, թե «եւ արդ, Անաստաս վարդապետս յերապոսեցի, ի խնդրոյ բարեպաշտ իշխանին Համազասպայ Կամսարականի Պալհաւունեաց, դրեալ զայսոսիկ ետու նմա, որ կամէր գնալ ի սուրբ Երուսաղեմ, որ և գնաց իսկ ... և ի հայրապետէն Երուսաղեմի թափեալ ազատեաց զամենայն վանորայսն հայոց, անկելոց ընդ բունակալութեամբն յունաց, որք կամէին փոխել զկարդ և զսահմանս նոցա և յեղաշրջել ի հաւատս, զոր քարոզէին յայնմ ժամանակի Յորնաղ քաղկեդոնիկ հայրապետն Երուսաղեմի յունաց»: Անաստասի այս վկայության հաստատումն ենք՝ գտնում Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսապետի (574/75-592/93) Աղվանից Աբաս կաթողիկոսին (552-596) ուղղած նամակում⁴⁰: Ե-

38 Ուշագրավ է, որ բացի հայկական վանքերից Աղվանից վանքեր ևս արձանագրվում են նաև V դարում. "Auch die Armenier traten schon im 5. Jahrhundert als geschlossene Gruppen auf, siedelten z. T. in griechischen Klöstern und erbauten sich auch eigene. Drei Kloster sind auch für die Kaukasischen Albanier bezeugt" (Hans-Georg Beck. Kirche und theologische Literatur im byzantinischen Reich. München, 1959, S. 206). Վրաց վանքերի մասին հեղինակը գրում է, թե "Stark war auch der Zustrom georgischer Pilger im Heiligen Land. Petros der Iberer [+488] hatte sein Kloster zwischen Gaza und Majuma. Iustinianos I restaurierte dieses kloster sowie das der Lazen in de Wüste Juda. Auch in Jerusalem war ein Iberer-Kloster. Aber auch noch im hohen Mittelalter werden georgische Kloster errichtet (նույն տեղում):

39 Յ. Ք յ ու ը տ յ ա ն. Խճանկարը (Mosaïque) հայոց մոտ (կանխագույն շրջանին). Երուսաղեմի խճանկարները- անոնց գյուտը.- «Բաղմավես», 1934, էջ 195-199:

40 Տե՛ս Կ ա Ր ա պ ե տ վ ա Ր դ ա պ ե տ (Տեր Մկրտչյան). Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսի թուղթը առ Աբաս Աղուանից կաթողիկոս.- «Արարատ», 1896: Նաև առանձին՝ Վաղարշապատ, 1896: Նամակը հայերենից լատիներենի է

րուսաղեմից Հովհաննես եպիսկոպոսապետը հորդորում է Աբասին տեղի չտալ Հայոց թելադրանքին⁴¹, «զորս ես նգովեցի և Հալածեցի, և քաղաքս՝ դեռ այրեր գվանսն մի Հայոց», այլ դիվանադիտորեն սպառնում է «րնդ բարուք ճանապարհ հաւատոյ և գործոյ ընթանաս, զոր մեր լուեալ յոյժ ուրախ եղաք»⁴²:

Հովհաննես եպիսկոպոսի նամակում թվարկվում են դրեթե նույն իրադարձությունները, ինչ շարադրված է Անաստասի նամակում, սակայն միանգամայն հակառակ դիրքերից ու հակառակ գնահատականով: Այսպես, խոսելով Հայոց մասին, նա դրում է. «Մինչ Հալածեալքն առ թագաւորն գնացին, ասելով եթէ Հալածեաց զմեզ Հայրապետն Երուսաղէմի: Իսկ բարեպաշտութիւն նորա դրեաց առ մեզ, եթէ բարիք արարէր ըստ կանոնաց զիրսգ խնդրելով...»: Այս Հաղորդմանը Համահունչ է Անաստասի այն տեղեկությունը, թե «Հայրապետք Հոռոմոց շարժեալք ի նախանձ, որք էին քաղկեդոնիկք, խանգարեցին զամենայն կարգս վանորէից մերոց: Վասնորոյ իշխանքն Հայոց միաբանեալ ետուն Հինդ կենգինարս»⁴⁴ թագաւորին Յուստինանոսի⁴⁵, որ է եթանասուն հազար գահեկանս և ազատեցին ի բռնութենէ Հայրապետացն յունաց զամենայն վանորայս Հայոց, թէ աւրանց և թէ կանանց⁴⁶ և թէ խրճիթք միանձանց՝ անդէն զինքեանս առնե-

թարգմանել Արիստակես Վարդանյանը. *Aristakes Vardanian. Des Jowhannes von Jerusalem Brief an aen albanischen Katholikos Abas.*— *Oriens Christianus, N. S., II (1912), S. 64–77.*

41 Տե՛ս «Թուղթ, զոր տէր Հայոց կաթողիկոս և այլ եպիսկոպոսունք առ Աղուանից եպիսկոպոսունս արարին».— «Գիրք Թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 81–84:

42 Իմա Երուսաղեմում:

43 «Արարատ», 1896, էջ 252: Թղթի հրատարակիչ Կարապետ Տեր Մկրտչյանը գրում է, թե «այս թղթի մեջ մեր եկեղեցվո պատմության Համար կարևորություն ունեցող մի կետն էլ այն Հալածանքն է Հայոց վանքերի դեմ, որի մասին տգեղ ու ինքնահավան բավականությամբ խոսում է Երուսաղեմի եպիսկոպոսը: Յավայի է միայն, որ այս մասին մենք ուրիշ աղբյուրներից տեղեկություններ չունենք և չենք կարող այստեղ մուծ մնացած մի քանի կետերը պարզել. երբ՝ են արդյոք Հայոց վանքեր Հաստատվել Երուսաղեմում, ովքե՛ր էին նոցա պաշտպանող իշխանները, ի՞նչ հետևանք ունեցավ այն Հալածանքը» (նույն տեղում): Լեոն այդ իրադարձությունները ենթադրում է Հուստինոս Բ-ի գահակալման շրջանում (565-578), որը, ինչպես կտեսնենք ստորև, հավանական է (տե՛ս Լ ե ո. Երկերի ժողովածու. Հ. 2, Երևան, 1967, էջ 239–240):

44 Նշված գումարի չափի մասին պատկերացում ունենալու Համար վկայակոչենք Հովհան Եփեսացու այն վկայությունը, թե Տիբերիոսի ժամանակ (578-582) բանակցությունների ընթացքում «Պարսիկը հույս ուներ, որ երեք տարվա խաղաղության դաշինք կնքելու Համար 3 կենտենար, այսինքն՝ ամեն մեկ տարվա (խաղաղության) Համար մեկ կենտենար ոսկի կարող է ստանալ» (Ասորական աղբյուրներ, Ա, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 432):

45 Հուստինոս Բ-ն իշխել է 565-578 թթ.:

46 Երուսաղեմում IV դարի առաջին կեսին արդեն Հայ կանացի մենաստանի առկայության մասին վկայություն է պահպանվել «Վրաց գարձի» մեջ, որտեղ պատմվում է, թե Երուսաղեմում Սառա անունով Դիփնցու մոտ Նինոն երկու տարի ծառայելու ընթացքում սովորել է Հայերեն և նրանից է հարցրել Քրիստոսի խաչելության և Հարության խորհուրդները, որովհետև «ոչ ոք չկար Երուսաղեմում նրա չափ ըստ ամենայնի Հին ու նոր Հավատի գիտակ»: (Տես Հին վրացական վարքադրական հուշարձանները. Հ. 1, Թբիլիսի, 1963, էջ 110. վրացերեն): Տես նաև Պ. Մ ու ը ա դ յ ա ն. «Մեփորեայ/մեփորել/միփորել» վարչական տերմինը.— «Լրաբեր Հաս. գիտ.», 1977, №7, էջ 56, ծան. 26: Համոզված լինելով, որ մինչև IV դարի կեսերը պետք է որ եղած չլինեին Հայ կուսանոցներ, իսկ «ե գարեն Հետո այլևս չենք գտներ ավելի քան չորս Հարյուր տարի կուսանոցաց հետքը Հայաստանի մեջ», Հ. Վարդան Հացունին Անաստասի Յուզակում եղած արձանագրումը նկատի ունենալով, խիստ կասկածի տակ է առնում Յուզակի վավերականությունը, ասելով թե՛ «մեր նյութին ամբողջության Համար հարկավոր է նկատել և

լով իշխողս»: Հովհաննես եպիսկոպոսի հետագա շարադրանքից ավելի որոշակի է դառնում հայ իշխանների միջամտության փաստը. «Այլ և հերձուածդ իսկ հայոց անգլուխ է և ընդ բազում հերձուածս միավորի⁴⁷»: Եւ իբրև ի գրոց ինչ ոչ կարացին ցուցանել իշխանքն հայոց, առ իս աղաչանս առաքեցին՝ եթէ առաջին թագաւորքն զվանս գայն մեզ իբրև զպարգև շնորհեցին նովիմբ ուսմամբն⁴⁸: Որոց արարի պատասխանի, թէ անհնար է թագաւորաց հերձուածս պարգևել շնորհել: Եւ իբրեւ ոչինչ ելս գտեալ լուսեցին⁴⁹:

Որ հայոց իշխանները իրոք եղել են Երուսաղեմում և հետամտել են հայկական վանքերի պաշտպանության գործին, հաստատվում է Հովհաննես եպիսկոպոսապետի հետևյալ վկայությամբ ևս. «Իսկ ես կոչեցի զիշխանս հայոց եւ բազում ինչ խոսեցայ, եւ նոքայ՝ ոչ կեսարիա կալան բարուրս. եւ ես ասեմ՝ թէ կեսարիայն հաճոյ է ձեզ, երթաք ի կեսարիայն կացէք⁵⁰, բայց յերկուս քաղաքս թագաւորական յայտնի հերձուածողի ոչ

գայն՝ որ Հայաստանն դուրս ալ կը հիշվին երբեմն հայ կուսանոցներ: Այսպես, Անաստաս վարդապետի նորահնար կամ խաթարված ուսմանը դրույթուն մը, ինչ ազդայնամոլ մեծաբանությունը ու երևակայությունը, Երուսաղեմի մեջ Տրդատոս՝ Լուսավորչի և անոնց ժամանակակից հայ իշխանաց կողմեն կառուցված կը նշանակե՛ն հանվանե՛ն յոթանասուն մենաստան, «եթէ արանց վանք, եթէ կանանց վանք, եթէ միանձանց խրճիթ» և կուսանոցաց մեջ հատկապես կը հիշե Ամատունյացը Սիոնի մոտ՝ «ուր հաւատաւորքն բնակէին»: Եւ թե հետո հայք զանազան պատճառներով կորուսին անոնց մեկ մասը: Իսկ տաճկական տիրապետության շրջանին՝ հայ կրոնավորք պարսպին քով դեռ իրենց ձեռք մնացածները «կանանց վանքեր արարին և սարկավազուհիս կարգեցին, զի անհարկ չիցին և ազատ որպէս և զայլ կանանց վանէրը»: Բայց ուստի՝ ժողովեցին այդքան պատրաստ հայ հավատավորներ և լեցուցին վանքերդ: Հավատալու համար պատմական ամեն պահանջներն զուրկ դրույթանս, թե հայք իրենց երկիրը թողած զարդարեր են վանքերով իրենց իշխանութենեն հեռի գտնված Երուսաղեմ քաղաքը, և այն ալ այնպիսի շրջանի մը մեջ՝ ուր կանոնավոր մենաստանաց գոյությունը կասկածելի տեսանք հայ հողին վրա անգամ, պետք է գրույթանդ հեղինակին երևակայությունն ունենայ» (տե՛ս Լ. Վ. Հ ա ց ու ն ի. Կուսաստանք Հայաստանի մեջ. «Բազմավեպ», 1923, էջ 76-77):

47 Հմմտ. Н. Т а л ь б е р г. История христианской церкви. Москва — Нью-Йорк, 1991, с. 167-169.

48 Այս վկայություններից պարզվում է, որ «առաջին» թագավորներին վկայակոչելով, իշխանները փորձել են պնդել հայոց վանքերում «նովին ուսմամբ» գոյությունը շարունակելու իրենց իրավունքը: Այստեղից, սակայն, միաժամանակ հաստատվում է, որ այդ վանքերը իրոք կառուցված են եղել դեռևս IV-V դարերում և Անաստասի վկայությունները միանգամայն հավաստի են և արտացոլում են VI դարի երկրորդ կեսի դրույթունը: Այս վկայությունը կարևոր է նաև մեկ այլ առումով: Անաստասի կազմած ցանկի մեջ «շնորհված» վանքերի մասին թեև նշումներ չկան, սակայն Հովհաննես եպիսկոպոսի վկայությունը ապացուցում է, որ առաջին թագավորների կողմից մի շարք վանքերի շնորհված լինելու գաղափարը կար արդեն VI դարում:

49 «Արարատ»-1896, էջ 252:

50 Նույն տեղում, էջ 253: Նամակում եղած «կեսարիա կալան բարուրս» արտահայտությունը հավանաբար նշանակում է, թե այդ ժամանակ Ագաթանգեղոսի երկրում առկա Լուսավորչի կեսարիայից գալու և քրիստոնեությունը բյուզանդական ճանապարհով տարածելու մասին հաղորդումը օգտագործվում է որպես հայոց հավատի ճշմարտացիության հիմնավորում: Ըստ այդմ էլ, նշված վկայությունը կարևոր է այն առումով, որ հայոց եկեղեցին մեղադրվում էր, թե իբր հայերը «հրաժարվեցին սուրբ Գրիգորի ավանդությունից, անջատվելով կեսարիայի աթոռից և հրաման ստացան Պարսից արքայից, որ իրենք կատարեն իրենց ձեռնադրությունը... և նզովքով որոշեցին չհաղորդվել Երուսաղեմի և Նոր Հռոմի հետ և նրանց հետ, ովքեր ի վերս մեր տիրոջ Հիսուս Քրիստոսի խոստովանում են երկու բնություն» («Բանքեր Մատենադարանի», 1962, հ. 6, Երևան, էջ 464-465): Նույնը կրկնում է վրաց Արսեն կաթողիկոսը. «...Հայքը (Սոմխիթը) հեռացավ սուրբ Գրիգորի դավանությունից և կեսարիայից ձեռնա-

տամք ընակիլ ի յԵրուսաղէմ երկնաւոր թագաւորին եւ մերս երկրաւոր, եւ վասն այլ տիեզերաց իւրաքանչիւր եպիսկոպոսունք գատասարտին եթէ անփոյթ առնեն»: Այնուհետեւ հայտարարվում է, թե իբր «Եւ ապա հայք հաղորդացան և եթէ մնայ ոք հաղորդիլ ունին»⁵¹: Նույն այս իրադարձութիւններին է վերաբերում Անաստասի հետեյալ հաղորդումը. «Ասկայն յետ ժամանակաց ինչ եւ աւուրց, սկսան բազում ներութիւնս տալ եւ տանջանս հարցն հայոց երկաբնակ պատրիարքունքն յունաց՝ սակս ոչ հաւանելոյ նոցա ժողովոյն Քաղկեդոնի եւ միաբանեալ ամենայն հարք եւ առաջնորդք՝ անձինք հինգ հարիւր գրեցին առ երանելի կաթողիկոսն Հովհան եւ այլ աթոռակալսն, եթէ զի՞նչ պարտ է առնուլ, հաւանե՞լ նոցա, եւ ունիլ զտեղիս բնակութեան իւրեանց եւ թէ թողուլ եւ ելանել անտի, վասն զի հրաման թագաւորին յունաց օր ըստ օր է իստանայր ի վերայ սրբոյ քաղաքին Երուսաղէմի եւ ի վերայ հայրապետացն...»⁵²: Ըստ Անաստասի վկայութեան «առ այս գրեաց կաթողիկոսն հայոց, թէ վասն մասին հաւատոյ մի հնազանգիք դոցա, այլ թողէք եւ արտաքս գնացէք ի քաղաքէ այտի: Վասնորոյ բազումք թողին զվանորայս եւ զինչս իւրեանց ի բաց գնացին, ոմանք չոգան յԵգիպտոս»⁵³ եւ ոմանք գնացին բնակեցան ի Կեսարիայ⁵⁴ եւ բազումք եւս ի տեղւոյն իւրեանց ոչ շարժեցան եւ ոչ գնացին յայլ ուրէք, այլ կացին եւ մնացին ի տեղիս իւրեանց՝ համբերելով բազմաց նեղութեանց, աւարառութեանց, դանից եւ տանջանաց, մինչեւ տիրեցին տաճիկք աշխարհին Պաղեստինու եւ յԵրուսաղէմ եւ այնուհետեւ ոչ եւս համարձակեցան յոյնք բռնադատել զոք»⁵⁵:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Հովհաննես եպիսկոպոսապետը արձանագրում է իր կատարած հալածանքը ոչ միայն հայոց, այլև հայ-աղ-

գրութեան (առնելուց), ինչպես վերջինս էր ուսուցել» (տե՛ս Լ. Մ. Ե և Ի ք ս ե թ - Բ և Կ. Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին. Ա, Երևան, 1934, էջ 33):

51 «Արարատ», 1896, էջ 253:

52 Ղ. Ալիշան. Հայապատում, էջ 229:

53 Այս արտագաղթի հետեանքն է, մեր կարծիքով, հայ ուխտավորների այն բազմաքանակութիւնը, որ արձանագրվում է VII դարում: Մինայի արձանագրութիւնների հավաքմանն ու հրատարակմանը ձեռնամուխ եղած Մայքլ Սթոունը գրում է. «Հայ ուխտավորների՝ Աինայում եղած լինելու մասին պահպանված է պատմական վկայութիւն, որը հիմնականում ընդգրկում է VII դարը: Այդ վկայութիւնը մեկն է այն պատմութիւններից, որոնք վերագրվում են Անաստաս Մինայեցուն և պատմվում է այն մասին, որ 800 հայ ուխտավորներից բաղկացած մի խումբ այցելել է վանքն ու լեռը VII դարի կեսերին» (F. N a u. Le text grec des recits du moine Anastase sur les saints peres du Sinai. — Oriens Christianus, 2, 1902, p. 81-82). Տե՛ս Մ ա յ ք Լ է. Ս թ ո ու ն. Մինայի հայերեն արձանագրութիւնները. — «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 91: Հայ բնակչութեան հետագա ուխտագնացութիւնների մասին տե՛ս The Armenian inscriptions from the Sinai. Edited by Michael E. Stone. With Appendixes by Michel van Esbroeck and William Adler. Massachusetts.

54 Վ. Վ. Բոլոտովը V-VI դարերի համար արդեն արձանագրում էր, թե «Кападокия и Армения в V-VI вв. имели среди палестинского монашества славных и немалочисленных представителей». — Христианские чтения, 1892, № 2, с. 620.

55 Ղ. Ա Լ Ի շ ա ն. Հայապատում, էջ 229: VI դարի հալածանքների մասին գրել է հետադայում նաև Հովհաննես Դրասխանակերտցին. «Իսկ իբր ամբ ԼԵ ի վերայ ճշմարիտ հաւատոյն անցանէին, և զկնի Անաստասայ Յուստիանոս ... թաղաւորէր, սա ... գանտանելի զվտանգս վշտալից տանջանաց արանց սրբոց և ուղղափառաց ի վերայ հաստատէր և դարձեալ արեամբ շաղախէր և զյատակս եկեղեցւոյ սրբոյ» (տե՛ս Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց, էջ 62):

վանքի ու «աղվանից» կոչվող վանքերի հոգևորականության նկատմամբ: Խորհուրդ տալով Աբաս կաթողիկոսին հալածելու միաբնակներին՝ «ղվանսգ կարգաւորէա և մաքուր պահեա զքաղաքսգ», Երուսաղեմի եպիսկոպոսը գրում է. «Եւ ես նոյնպէս կարգաւորեցի, որպէս թագաւորն Հրամանաց, այլ և այլ վանորայսգ, որ ի քաղաքիս և որ արտաքոյ»⁵⁶: Այստեղից պարզ է, որ ոչ միայն լիովին իրական են Անաստասի Յուցակում բերված «աղվանից» կոչվող վանքերը, այլև գրանք ևս գրավվել էին երկաբնակների կողմից:

Ի վերջո սույն նամակի կապակցութեամբ կանգ առնենք նամակի թվագրման հարցի վրա ևս, որը նամակի հրատարակիչ Կ. Տեր-Մկրտչյանի համար մնացել էր անորոշ: Այգ առումով մեզ օգնում է նամակում նշված հետևյալ վկայութիւնը. «Եւ ես, — գրում է Հովհաննես եպիսկոպոսը, — թէպէտ եւ չհօժարէի յայլոց ի թագաւորութիւն այդպիսի ինչ գրել, բայց յորժամ չարալուր գիրն հայոց ի լսելիս իմ եհաս, հարկաւորեցայ գրել»: Այստեղ, մեր կարծիքով, ուղղակի ակնարկված է Հովհաննես Երկրորդ Գաբեղենացի կաթողիկոսի (557-574) հայտնի նամակը ուղղված Աղվանից Աբաս կաթողիկոսին, որը պահպանվել է ինչպես «Գիրք թղթոցում»⁵⁷, այնպես էլ Մովսես Կաղանկատվացու մոտ⁵⁸: Ե՞րբ է գրվել Հովհաննես Գաբեղենացու նամակը: Ն. Ակինյանը այն թվագրում է 568 թ.⁵⁹: Այգ թվականը ընդունված է նաև Ա. Հակոբյանի կողմից⁶⁰: Մ. Օրմանյանը գտնում է, որ նամակը գրվել է մինչև 572 թ., իսկ Ե. Պետրոսյանը՝ 571-572 թ., մինչև Հովհաննես կաթողիկոսի մեկնումը Կ. Պոլիս, որտեղ նա մահացել է 574 թ.⁶¹: Հ. Պողոս Անանյանը առանց որոշակիացնելու նամակի առաքման թվականը, գրում է, թե «Աղվանից Աբաս եպիսկոպոսը ընդունելե ետք Յովհաննես Գաբեղյանի նամակը և Դավիթի ժողովքին որոշումները, զանոնք կը ղրկե Երուսաղեմի եպիսկոպոսին՝ իր թովմաս անունով վանականին հետ... Երուսաղեմի հայրապետը բավական խիստ միջոցներ կը գործածե Քաղկեդոնի ժողովքը մերժող Երուսաղեմի հայոց դեմ, հալածելով զանոնք և կրակի տալով անոնց վանքը: Ու նույնը կը հորգորե, որ Աղվանից եպիսկոպոսն ալ ընե իր երկրին մեջ»⁶²:

Ուշագրավ է, որ Մովսես Կաղանկատվացին բերելով Հովհաննես կաթողիկոսի նամակը, որտեղ նամակի առաքման անհրաժեշտութիւնը հիմնավորվում է այն լուրերով, թե «եհաս առ մեզ լուր գժնգակ համբաւոյ, եթէ էն ոմոնք գայլք յափշտակողք զգեստու ոչխարաց, որք եկին յաշխարհ ձեր ... զչար որոմն անիծելոյն նեստորի և ժողովոյն Քաղկեդոնի անարգելաբար սերմանեն յոգիս անմեղաց, թիւրելով զնոսս յուղղափառ

56 «Արարատ», 1896, էջ 253:

57 Գիրք թղթոց, էջ 81-84:

58 Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ու ա գ ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 122-126:

59 Թուղթ Մակարայ Բ Երուսաղէմի հայրապետի ..., էջ 76:

60 А. А. АКОПЯН. Нշվ. աշխ., էջ 158:

61 Մ ա ղ ա ք ի ա ա Ր ք ե պ. Օ Ր մ ա ն յ ա ն. Աղգապատում. Բեյրութ, 1959, էջ 465: Ե ղ ն ի կ ք ա հ. Պ ե տ Ր ո ս յ ա ն. Աղվանից աշխարհի կաթողիկոսութեան մի քանի թվականների շուրջ. — «Էջմիածին», 1984, թ. ԺԱ-ԺԲ, էջ 81, 83:

62 Հ. Պ ո ղ ո ս Ա ն ա ն յ ա ն. Քննութիւն Հայ եկեղեցվո պատմութեան Ե և Ձ դարերու շրջանին. Վենետիկ-Ս. Ղաղար, 1991, էջ 99:

Հաւատոյ», այնուհետեւ պատմում է, որ նշված նամակը ստանալուց Հետո «տեառն Արասայ Աղուանից կաթողիկոսի յոյզ քննութեան առնելով իւրովք եպիսկոպոսօք, որ վերադոյնդ կան ի գրի, նոքօք Հանդերձ Հալածեաց ի տանէ Աղուանից զպիզծ վարդապետս աղանդոյն այնորիկ զԹոմասն կեղծաւոր և զփսաղտն եղիա և զԲնոտն և Իբաս և զայլսն ընդ նոսա, գնմանողս նոցին արար տարարնակ ի հեռաւոր վայրս: Եւ այնու եղեւ խաղաղութիւն ուխտի եկեղեցւոյ ի ժամանակին յայնմիկ»⁶³: Աբասին ուղղված Հովհաննես Գարեղենացու նամակի և դրա ազդեցութեամբ Աբասի կողմից Աղվանքից իրենց հալածվելու մասին Երուսաղեմում պատմել է նույն ինքը՝ «Թոմասն կեղծավոր», որը Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսի նամակում անվանված է «Աստուածասէր Թոմաս» երանելոյ Պանտափանաց վանական»⁶⁴:

Երուսաղեմի Հովհաննես եպիսկոպոսը, Թոմասից տեղեկանալով տեղի ունեցածի մասին, իր նամակով փորձում է կրկին Աղվանք ուղարկել նրան և հաղթահարել այնտեղ հայոց հաջողութունը, ուստի և շարադրում է իր միջնորդութեան հանգամանքները. «Աստուածասէր Թոմաս, երանելոյ Պանտափանաց վանական, ըստ սովորութեանն՝ որպէս յառաջ քան զմեզ յաջորդեալք սուրբ աթոռոյն Յակովբայ առեալ էր գիր Հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ, նոյնպես և ի մէնջ խնդրեաց և մատոյց տօմարս երկուս ժողովոյ, որ առանց Քրիստոսի ժողովեալ էր ի Հայս հակառակ սրբոց եկեղեցւոյ և զանձինս իւրեանց ի ժառանգութենէն Քրիստոսի ի րաց Հանին» զմին, զոր առաքեալ էր ի ձեր աշխարհդ, և զմիւսն՝ սահման Հաւատոյ իւրեանց ամբարշտութեանն, յորում և ուսոյց զմեզ վասն բարեսէր կամաց Երանութեան քում, եթէ ընդ ըրարոք ճանապարհ Հաւատոյ և դործոյ ընթանաս»⁶⁵, զոր մեր լուեալ, յոյժ ուրախ եղաք»:

Ավելին, Հովհաննես եպիսկոպոսը համոզված է, որ Աբասի կողմից հալածանքի թելադրողը եղել է «չարալուր գիրն հայոց», ուստի գիմելով

63 Մ ո վ ս է ս Կ ա դ ա ն կ ա տ ու ա ց ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 126: Սամուել Անեցիս պատմում է նեստորականների մի այլ այցելութեան մասին ևս. «Ի Լէ թուականիս եկին ի Հայս ասորիք՝ արք քաջաբան և կամէին սերմանել ղաղանդն նեստորի և նզովեալք հալածեցան: Բայց ոմանք ընկալան: Նոքա թարգմանեցին նոցին գիրս սուտս, զգօրտոսակ, կիրակոսակ, ղՊօղոսի տեսիլն...» (Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմադրաց. Վաղարշապատ, 1893, էջ 76-77):

64 Այս Թոմասի շնորհիվ է Հավանաբար, որ Անաստասի Ցուցակի երկրորդ տեղում նշված Պանտափանքը «ի կողմն Ձիթենեաց սուրբ լերինն, շինեցաւ արքունի ծախիւք յանուն սուրբ Կաթողիկէին, որ ի Վաղարշապատ քաղաքի», Անաստասի այցելութեան ժամանակ արգեն գտնվում էր «ի ձեռս աղուանից»:

65 Ուշագրավ է, որ նման գնահատականի ենք հանգիպում «Աղվանից աշխարհի կաթողիկոս Աբասի» մասին նաև Հունարեն թարգմանութեամբ մեզ հասած NARRATIO DE REBUS ARMENIAE հայ-քաղկեդոնական երկում: Նշելով Կոստանդնուպոլսում տեղի ունեցած ժողովին հայ եպիսկոպոսների ու վարդապետների մասնակցութեան մասին, նրա հեղինակը գրում է. «Վերադառնալով Հայաստան, նրանց մի մասը սիրով ընդունեց միութիւնը, իսկ մյուս մասը Հովհաննես կաթողիկոսի ժամանակ պոռնկացավ (իմա՝ հերետիկոսացավ), որի մասին այժմ մասնավորապես խոսելու կարիք չկա: Այսպիսով, նրանք նամակ դրեցին Աղվանից աշխարհի կաթողիկոս Աբասին հետևյալ բովանդակութեամբ. «Եկ, միաբանիր մեր Հավատքին՝ Քրիստոսի աստծո մի բնութեան ընդունելուն և երեքսրբայն հիմնին ավելացրու «որ իսչեցար»-ը, իսկ նա չէր համաձայնվում: Նույնպես և Սյունյաց եպիսկոպոս Վրթաննսին, սակայն նա ևս չէր համաձայնվում...».- «Բանբեր Մատենադարանի»: 1962, հ. 6, Երևան, էջ 465. Թարգմանութիւնը և հրատարակումը Ն. Բարթիկյանի:

Աբասին գրում է. «Բայց վասն քո երանութեանդ լուաք, եթէ կամակից ես բարւոյ և ընկալար թուղթս երկուս ի Մակարայ⁶⁶ և յԵւսդոքայ⁶⁷ ի ձեռն բարեպաշտի և աշխատասիրի Թումասու, որ ոչինչ պէտս ունի ի ձեռն պատուի և մեծութեան, բայց միայն ոգոց ձեռոց փրկութեան, վասն որոյ և զիս թախանձեաց գրել ըստ օրինակի նոցա, որ յառաջ քան զմեզ էին նախընկալք աթոռոյս Յակոբայ Առաքելոյ»⁶⁸: Այսպիսով, պարզվում է նաև, որ Մակարի (565-572) թուղթը ևս՝ գրված ի պատասխան Հայաստանից Երուսաղեմ առաքված նամակի, տարվել է նաև Աղվանք նույն թումասի կողմից, որին և վերագրվում է թղթերի թարգմանությունը:

Այսպիսով, վերոբերյալից պարզ է դառնում և հաստատվում, որ Երուսաղեմի հայոց և Աղվանից վանքերի և Հայաստանի ու Աղվանքի⁶⁹ դավանական կողմնորոշման հարցերի սրություն գազաթնակետն ընկնում է VI դարի երկրորդ կես⁷⁰, որի արդյունքն է և Անաստասի կողմից կազմված

66 Ն. Ակինյանը, որ հատուկ աշխատություն է նվիրել Մակարի թղթի հետ կապված խնդիրների ուսումնասիրությանը, հետևյալ կերպ է ներկայացնում Երուսաղեմի աթոռի հաջորդականությունը. «552 հոկտեմբերին, երբ վախճանեցավ Երուսաղեմի Պետրոս հայրապետը, հաջորդեց անոր աթոռին վրա Մակար Բ (Եւազր. Պատմ. եկեղ., Դ, 37, Թէոփ. յամն աշխ. 6058): Բայց քիչ հետո (552 դեկտ.) ամբաստանվեցավ Մակար իբրև Որոգինեան և Յուստինիանու հրամանով ձգվեցավ աթոռեն: Հաջորդ նշանակվեցավ Եւտոքիոս (Թէոփ., յամն 6059): Կր գրե թեոփանես (յամն 6061). Եւտոքիոս եկեայ Երուսաղեմ, վառյալ ատելությամբ ընդ Ապողինարի, Ագաթոնի և Մակարա, ընդ միանձուես նորույն Լավրայի, հալածեաց զնոսա որպես Որոգինեանս և այսր իսկ աղագաւ և ինքն ընկեցաւ յաթոռոյն և Մակար դարձեալ միւս անգամ բարձրացաւ յաթոռ իւր: Այս պատահեցավ 563 կամ 564 տարվոյն: Մակար վախճանեցավ 575-ին: Հաջորդեց աթոռին վրա Հովհաննես, որ Երուսաղեմի Անհանգստից վանքեն էր (575-592)»: Տես Ն. Ա կ ի ն յ ա ն. Թուղթ Մակար Բ Երուսաղեմի հայրապետի առ Վրթանես եպիսկոպոսպետ Սյունյաց հաղագս կարգաց եկեղեցվո. – «Հանդես ամօրյա», 1930, էջ 531-532:

67 Ուշագրավ է Հովհաննես եպիսկոպոսի հաղորդումը, ըստ որի Եւտոքիոսը ևս թուղթ է առաքել Աղվանք նույն թումասի միջոցով:

68 «Երանելոյն Մակարայ սրբոյ քաղաքին Երուսաղէմի հայրապետի կանոնական թուղթ ի Հայս վասն կանոնադրութեան կաթողիկէ եկեղեցւոյ կարգաց, զոր չէ արժան ընդ սահման անցանել, գլուխք ինն».– տես «Գիրք թղթոց», էջ 406-412: Քննությունը տես «Կանոնագիրք հայոս», աշխատասիրությունամ Վազդեն Հակոբյանի. Հ. Բ, Երևան, 1971, էջ LXXVII–XCIX: Ն. Ա կ ի ն յ ա ն. Թուղթ Մակար Բ Երուսաղեմի հայրապետի առ Վրթանես եպիսկոպոսպետ Սյունյաց..., էջ 531-532: Անկախ բանավեճից, թե ում է պատկանում Գիրք թղթոցում պահպանված Մակարի անունով նամակը Մակար Ա-ին, թե Մակար Բ-ին, մեզ համար էականը տվյալ գեպքում այն հաղորդումն է, որ Հովհաննես եպիսկոպոսի նամակում հիշված Մակար Բ-ն իրոք թուղթ է ուղարկել Հայաստան:

69 Վրաստանի դավանական կողմնորոշման հարցը օրակարգի խնդիր դարձավ միայն Աբրահամ Աղբաթանեցու գահակալման տարիներին, քանզի մինչ այդ Կյուրիոնը դեռևս չէր համարձակվել բացահայտ դրսևորել իր կողմնորոշումը, թեև ներքուստ նա ևս հարել էր Երուսաղեմի եպիսկոպոսների դիրքորոշմանը, իսկ եղած ահազանգերը համապատասխան ընթացք չէին ստանում Հայոց կաթողիկոսարանում: Այդ մասին տես «Գիրք թղթոց», էջ 161-195: Ու լ ա տ ա ն ե ս. Պատմություն Հայոց. Վաղարշապատ, 1871: Ն. Ա կ ի ն յ ա ն. Կյուրիոն կաթողիկոս վրաց. Վիեննա, 1910 և այլն:

70 Սիրարփի Տեր-Ներսիսյանը ուսումնասիրելով VI դարի վերջի և VII դարի սկզբի դործիչ Վրթանես վարդապետ Քերթոզի «Յաղագս պատկերամարտաց» երկը, գրում է, որ այն «պետք է լինի պատկերամարտերի դեմ որևէ լեզվով դրված ամենահին դրությունը» և այդ առիթով անդրադառնում է նաև VI դարի երկրորդ կեսին Հայաստանում ստեղծված իրադրությունը: Նա շարունակում է. «Հովհան Օձնեցի կաթողիկոսը «Ընդդէմ Պաղիկեանց» երկում խոսելով հերձվածողների մասին, որոնք Ներսես կաթողիկոսի վախճանվելուց հետո Հայաստանում շատ էին տարածվել «և ի նոսա հատուցեալք եկին հարեցան կշտամբեալքն ի կաթողիկոսացն Աղուանից պատկերամարտք ոմանք, զի սիրէ առ համանմանսն իւր, հասանել վրիպեալն ի ճշարտութենէն» (Տեառն Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ

երուսաղեմի վանքերի Յուզակը՝ Երուսաղեմ ճանապարհորդելու պատաստվող Համագասպ Կամսարականի խնդրանքով: Այն փաստը, որ տաճիկների կողմից Երուսաղեմի գրավումից հետո հույները նկուն եղան և Հայերը Հանգիստ առան նրանց Հալածանքներից, արդեն բացառում է այդ ժամանակ Հայ իշխանների Երուսաղեմ դնալու, և ըստ այդմ նաև, Անաստասի կողմից նրանց Համար Յուզակ կազմելու անհրաժեշտությունը: Անաստասի Յուզակի VII և կա՛ս VIII դարին՝ վերագրելը, այսպիսով, արդեն դառնում է անհնարին⁷²: Ինչպես ասվեց, Անաստասը Յուզակը կազմել է Երուսաղեմ գնալ պատրաստվող Համագասպ Կամսարականի Համար և այդ փաստի (գնաց և ազատեց) Համագրումը Հովհաննես եպիսկոպոսի Հաղորդման հետ (եկան և զրուցեցինք) ցույց է տալիս, որ գործ ունենք նույն իրադրությունից և նույն փաստի հետ:

Նշելի է, որ հեղինակին անձանոթ է 614 թ. պարսիկների կողմից Երուսաղեմի գրավումը: Յուզակի կազմումը, այսպիսով, պետք է թվագրել 570-ական թվականներով: Այն Հայաստանում ներկայացվել է մի շարք Հայ նախարարների, որով և պայմանավորված է նախարարների անունների տարբերությունը մեզ Հասած ձեռագրերում: Անշուշտ, այլ խնդիր է, որ մեզ Հասած օրինակները սկզբնաղբերը չեն, այլ հետագայում (ամենայն Հավանականությամբ VII դարում) Յուզակին կցված բացատրական գրառումով տարբերակները, որը բնավ չի նսեմացնում Յուզակի իրական արժեքը և նրա վավերական ու Հավաստի լինելու հանդամանքը:

О ДАТИРОВКЕ СПИСКА АРМЯНСКИХ МОНАСТЫРЕЙ
ИЕРУСАЛИМА, СОСТАВЛЕННОГО АРХИМАНДРИТОМ
АНАСТАСИЕМ

ПАВЕЛ ЧОБАНИЯН

Р е з ю м е

Список армянских монастырей Иерусалима, составленный архимандритом Анастасием и введенный в научный оборот Г. Алишаном в конце XIX в., — важный средневековый памятник армянской письменности. На основе сопоставления фактов в Списке Анастасия с фактами, изложенными в отправленном Албанскому католику Аббасу (552 — 596) письме византийского епископа

մատենագրութիւնք. Վենետիկ, 1834, էջ 88-89): Այստեղ հիշված Ներսես կաթողիկոսը Ներսես Բ-ն է (548-557) և 554 թ. Դվինի եկեղեցական ժողովում հերձվածողների դեմ ձեռք առնված միջոցառումների մասին ծանոթանում ենք կաթողիկոսի կոնդակից և եպիսկոպոսների ու իշխանների արտասանած «Միաբանություն ուխտից» (Մ ի ր ա ր փ ի Տ ե ր - Ն ե ր ս ի ս յ ա ն. Հայ արվեստը միջնադարում. Երևան, 1975, էջ 16): Այդ նշանակում է, թե Աղվանքում ևս տարածում էր գտնում պատկերամարտությունը:

71 Մ. Ա դ ա վ ն ու ն ի. Հայկական հին վանքեր... էջ 18:

72 Այլ իրավիճակ էր ստեղծվել նախարարական է դարի սկզբի շրջանում Պարսից խոսրով Երկրորդ Փարվեզի (590-628) իշխանության տարիներին: Տե՛ս է. Դ ա ն ի Ե լ յ ա ն. Հայ եկեղեցու նկատմամբ խոսրով Փարվեզի վարած քաղաքականությունը. — «Պատմա-բանասիրական Հանդես», 1981, № 4, էջ 195-200:

Иерусалима Иоанна (574/5–592/3), в статье доказывається, что Список Анастасия был составлен в 570-х годах в связи с намерением армянских князей посетить Иерусалим с целью урегулирования армяно-византийских церковно-догматических споров. Констатируется также важность Списка Анастасия для дальнейшего более глубокого изучения истории армянской церкви и армянской общины Иерусалима IV–VI вв.

ON THE DATE OF THE ARMENIAN MONASTERIES' LIST IN JERUSALEM
COMPILED BY ARCHIMANDRITE ANASTASIUS

PAVEL CHOBANYAN

S u m m a r y

The List of the Armenian monasteries in Jerusalem was compiled by Archimandrite Anastasius and brought in the field of scientific research at the end of the 19th century by Gh. Alishan. It is an important mediaeval monument of the Armenian writings. The List was compiled by reason of the Armenian princes' intention to visit Jerusalem in order to regulate the Armenian-Byzantine church -dogmatic disputes. Comparative research of the facts brought both in the Anastasius List and in the letter of Johan the Bishop of Jerusalem (574/5-592/3 AD), sent to the Albanian Catholicos Abbas (552-596 AD), proves that the Anastasius List was compiled in 570s. It is also stated that the Anastasius List is an important source for a further and deeper research of the history of the Armenian Church and the Armenian community in Jerusalem in the 46th centuries.